ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2023 թվականի N 1047 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1063-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1063-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 2-դ ենթակետով հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 3-րդ կետի 6-րդ սյունակում «2023 թվականի 2-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2023 թվականի 4-րդ եռամսյակ» բառերով.

2) ծրագրի 4-րդ կետի 6-րդ սյունակում «2023 թվականի 2-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2024 թվականի 3-րդ եռամսյակ» բառերով.

3) ծրագրի 5-րդ կետի 6-րդ սյունակում «2023 թվականի 3-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2024 թվականի 1-ին եռամսյակ» բառերով.

4) ծրագրի 6-րդ կետի 6-րդ սյունակում «2023 թվականի 4-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2024 թվականի 4-րդ եռամսյակ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ